ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր

08/02/2024

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Հմայակ Խաչատրյանը, Յուրա Մանուկյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ռիմա Մանուկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 2024 թվականի փետրվարի 08-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերը հաստատելու

մասին.

3) Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին.

4) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.

5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցութի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.

6) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.

7) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերրի 21-ի N 155 որոշման ուժը կորցրած ճանաաչելու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

9) Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.

10) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին

11) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի n 143-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.

12) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի,77 -րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածներ N 1- :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:
2. Աճուրդը կազմակերպել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48. 1-րդ, 74-րդ և 76 -րդ հոդվածներով՝ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողամասը ընգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Թույլատրել՝ համայնքային սեփականություն հանդիսացող , մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր Ծաղկունյաց փողոց, հրապարակ 10 հասցեում գտնվող, բնակավայրերի, ընդհանուր օգտագործման 0.00279 հա / ծածկագիր՝ 07-005-0004-0005/ մակերեսով հողամասը և 23.45 քառակուսի մետր մակերեսով հասարակական սպասարկման սրահը / ծածկագիր՝ 07-005-0004-0005-001/ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով՝ 10 տարի ժամկետով օգտագործման տրամադրել:
2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 3 000 000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Մրցույթում հաղթող կճանաչվի լավագույն պայմաններ և առավելագույն գին առաջարկող մասնակիցը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով <<Խելացի Կանգառ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Ծաղկունյաց հրապարակ

10/1 հասցեում գտնվող, բնակավայրերի, ընդհանուր օգտագործման համար նախատեսված, 0,001 հա / ծածկագիր 07-005-0004-0006/ հողամասը և 10,07 քառակուսի մետր մակերեսով հարթակը / ծածկագիր 07-005-0004-0006-001/ առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 10 տարի ժամկետով օգտագործման տրամադրել <<Խեյացի Կանգառ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, <<Խեյացի Կանգառ>> կառուցելու նպատակով 70 / յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 4-րդ և 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Անահիտ Սահակյանի `դիմումը

1.Անահիտ Սահակյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 3 փողոց թիվ 39 հասցեում գտնվող 0,288 հա / կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0004/ մակերեսով հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Պահլավունաց փողոց 55/1 հողամաս հասցեում գտնվող 0,0086 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող ՝ բնակավայրերի, այլ հողեր հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 904 187 (ինը հարյուր չորս հազար մեկ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 155 ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի << Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին>> թիվ 155 որոշման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27- ի << Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<5121>> (Տրանսպորտային սարքավորումներ) <<16000.0>> թիվը փոխարինել <<38000.0>> թվով.
2) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<5129>> (Այլ մեքենաներ և սարքավորումներ) <<24000.0>> թիվը փոխարինել <<2000.0>> թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ն/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599-որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի >> 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 9 եզրակացությունը և Արտյոմ Յուրիկի Սահակյանի դիմումը

1.Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մարմարիկ գյուղի վարչական տարածքում գտնվող Արտյոմ Յուրիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 0,11 հա մակերեսով / կադաստրային ծածկագիր՝ 07-044-0137-0015/ գյուղատնտեսական, խոտհարք հողատեսքի՝ նպատակային և գործառնական նշանակության հողամսը փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի :

2.Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մարմարիկ գյուղի վարչական տարածքում գտնվող Արտյոմ Յուրիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 1,78329 հա մակերեսով / կադաստրային ծածկագիր՝ 07-044-0104-0053/ նպատակային և գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական, վարելահող, խոտհարք հողատեսքից 0,223 հա մակերեսով վարելահողի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների:

3. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակության փոփոխության դեպքում անհրաժեշտ է վճարել հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ-4 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024թվականի հունվարի 15-ի N 1/փ-16 եզրակացությունը և << ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ >> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի դիմումը

1.Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Գլխավոր մարզահամալիր թաղամաս 19/1 հասցեում գտնվող, << ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ >> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0,36 հա մակերեսով / կադաստրային ծածկագիր՝ 07-005-0026-0885/ հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 143-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեակավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1 Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակները, համայնքի կողմից մատուցվող նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը, արտոնությունները սահմանելու մասին >> N 143-Ն որոշման հավելված 3-ի, 2-րդ մասի,

1-ին կետի, է և ը ենթակետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝

է.	Կիթառի ուսուցում	1000
գ.	Թատերականի ուսուցում	1000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1918-Ն որոշումը և Արման Մանժուրի Գրիգորյանի դիմումը՝

1. Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձորում գտնվող Արման Մանժուրի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր 07-005-0020-0013) 0,20 հա մակերեսով հողամասի նպատակային և
գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արոտավայրից փոխել որպես հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողամաս:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակության փոփոխության դեպքում անհրաժեշտ է վճարել հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՈՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղայյանը

_____